

«Հ.Ս. ՊՌՈ» ՍՊԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. ՊՐՈ

ՍԱՐԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA

H. S. PRO

LTD

Հայաստան, Երևան, Դրոյի փող.

Հեռ. Tel. Phone 093 207395

e-mail:hs_pro_ltd@mail.ru

82, բն.31

Армения, Ереван, ул Дро д.8 кв.31

8/31 Dro st.,

Yerevan, Armenia

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

А. С. ПРО

ООО



Փ-05.1/26

20 մայիս 2026թ

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ

Տնօրեն

Պարոն Մ. Հազրոյանին

«Էլեկշին» ՍՊԸ տնօրեն

պարոն Հ. Դավթյանին

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձոր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «Նարեկ» մասնաձեռնի ընթացիկ նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ «Հ. Ս. ՊՐՈ» ՍՊԸ-ն երաշխավորվում է դրանց համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջերին:

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձոր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «Նարեկ» մասնաձեռնի ընթացիկ նորոգման շինարարարության նախահաշվային արժեքը կազմում է 436. 029,711 հազ. դրամ՝ ներառյալ ԱՄՀ:

Արդիր՝ փորձաքննության եզրակացությունը 2 օրինակից, յուրաքանչյուրը 6 թերթ:

Տնօրեն

Հ. Սողոմոնյան



«ՀԱՍՏԱՏՈՐՄԵՆ»
Տնօրեն  Արդունյան
«20» մայիս 2026թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձոր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի «Նարեկ» մասնաձեռնի ընթացիկ նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի վերաբերյալ

Պատվիրատու

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ

Նախագծող

«Էլեկշին» ՍՊԸ

Լիցենզիա № 000538, 2-րդ դաս

Արտոնագիր ՃԱԴ-Ա1-025, ԿԵԴ-Ա3-030

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի «Նարեկ» մասնաձեռնի ընթացիկ նորոգման նախագծանախահաշվային աշխատանքների համար հիմք են ծառայել՝

- ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի «Նարեկ» մասնաձեռնի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների մշակման ՎԲԿ-ԳՀԾԶԲ-25/76 ծածկագրով պայմանագիրը,

- Նախագծման ՆԹ-5720-26 թույլտվությունը առ 07.05.2025թ. PM32-5C77-A783-B844 հսկիչ համարով,

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 11042025-06-0016 վկայականը 06-001-0347-0181 կադաստրային ծածկագրով,

- «Ալենշին» ՍՊԸ-ի կողմից տրված տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը
- Պատվիրատուի նախագծային առաջադրանքը,

Աշխատանքային նախագիծը դիտարկման է ներկայացված հետևյալ կազմով՝

- Ճարտարապետաշինարարական մաս, այդ թվում՝
 - Ճարտարապետական մաս
 - Կոնստրուկտորական մաս
 - Էլեկտրամատակարարում և էլ. Լուսավորություն
 - Ջեռուցման, օդափոխություն և ծխահեռացում,
 - Զրամատակարարման և կոյուղու համակարգեր,
 - Հակահրդեհային ազդանշանային համակարգեր,
- ՇԿՆ,
- Նախահաշիվ:

Գլխավոր հատակագիծ

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձոր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գոյություն ունեցող «Նարեկ» մասնաձեռնը կառուցված է 3.21666հա հողատարածքի վրա:

Տարածքում մասնաձեռնի շուրջ իրականացվել է ճանապարհային ցանց 6մ լայնությամբ, տարածքը բարեկարգվել է, կանաչապատվել: Մայրերը երեսապատվել են բետոնե սալիկներով: Ասֆալտապատ ճանապարհները, մայրերը և կանաչ տարածքները երկրված են բազալտե եզրաքարերով: Ճանապարհները ասֆալտապատվել են: Տարածքում նախատեսվել է պահակակետ և կաթսայատուն: Տարածքը ցանկապատվել է ուղղանկյուն խողովակներից պատրաստված 3,1մ մոդուլով մետաղական ցանկապատով տեղադրված բետոնե պատի վրա: Պատը երեսապատվել է բազալտե 30սմ հաստությամբ սալերով:

Տեխնիկական ցուցանիշները՝

- հողամասի մակերեսը՝ 3.21666 հա,
- հարկայնությունը՝ 2 վերգետնյա հարկ,
- ասֆալտապատ ճանապարհի մակերեսը՝ 2064,0քմ
- մայրերի մակերեսը՝ 206,4քմ
- կանաչապատման մակերեսը՝ 766,0քմ:

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի, տեղագնված շրջանը գտնվում է III սեյսմիկ գոտում, գրունտների առավելագույն հորիզոնական արագացումը՝ $A_{max}=0.50g$:

Ճարտարապետական մաս

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի «Նարեկ» մասնաշենքը խաչաձև ուրվագծով հակասեյսմիկ կարանով բաժանված երեք հատվածամասեր երկհարկանի կառույց է:

Առաջին հարկում նախատեսվել է նախամուտքը, միջանցքը, ընդունարան-տեղեկատուն, բաժնի վարիչի առանձնասենյակը, բժշկի սենյակները, ավագ բուժքրոջ առանձնասենյակը, հանդերձարանները, սանհանգույցները, բաղնիքը, տեխնիկական սենյակները և պահեստները, բժշկական անձնակազմի սենյակները, ուլտրաձայնային հետազոտման սենյակը, ուրոլոգիայի սենյակը, սոնոգրաֆիայի կաբինետը, հետազոտման և սանմաքրման սենյակները, գիպսային վիրակապարանը, դեղատունը և վիրահատական բլոկը: Վիրահատական բլոկում նախատեսվել են հիվանդասենյակներ, վերակենդանացման հիվանդասենյակ, վիրահատարան, հետվիրահատարան, վիրակապարան, բուժքույրերի սենյակներ, նախավիրահատարան, անեսթեզիոլոգիայի կաբինետ, մաքրման և վնասազերծման սենյակ, միջանցքներ, սանհանգույցներ, վերելակ, անձնակազմի սենյակ և տեխնիկական սենյակներ:

Երկրորդ հարկում նախատեսվել է ընդհանուր և վիրաբուժական և թերապևտիկ բաժանմունքները: Ընդհանուր մասում նախատեսվել է խոհանոց, ճաշարան, բուժանձնակազմի սենյակ և սանհանգույցներ: Վիրաբուժական բաժանմունքում նախատեսվել է հիվանդասենյակներ սանհանգույցներով, բուժանձնակազմի սենյակ, բաժանմունքի վարիչի սենյակ, վիրակապարաններ, սանհանգույցներ: Թերապևտիկ բաժանմունքում նախատեսվել է հիվանդասենյակներ սանհանգույցներով, բուժանձնակազմի սենյակ, բաժանմունքի վարիչի սենյակ, վիրակապարաններ, սանհանգույցներ:

Հատակները իրականացվել են վինիլից, բացառությամբ սանհանգույցներից, հանդերձարաններից, խոհանոցից պահեստային և տեխնիկական սենյակներից, որտեղ նախատեսվել է կերամագրանիտե հատակներ: Առաստաղները կախովի են իրականացված առմստրոնգ տիպի: Որոշ հատվածներում իրականացվել են գիպստվարաթղթից, որոնք ներկվել ենլատեքսային ներկերով: Պատերի հարդարումը հիմնականում իրականացել է լատեքսային ներկերով: Սանհանգույցներում, հանդերձարաններում, բաղնիքում, ռենտգեն սենյակում, ուլտրաձայնային հետազոտման սենյակում, վիրակապարանում, վարակազերծման սենյակում, խոհանոցում պատերի հարդարումը իրականացվել է կերամիկական սալիկներով:

Նախատեսվել են դռների մասնակի վերանորոգում, մետաղապլաստե դռների և պատուհանների ապակեփաթեթի փոխարինում:

Միջնորմները իրականացվել են գիպստվարաթղթից զույգտակ ձայնաջերմամեկուսացումով:

Նախատեսվել են թվով արտաքին նոր աստիճաններ որպես էվակուացիոն ելքեր: Աստիճանները երեսապատվել են բազալտե սալերով:

Ներքին աստիճանները երեսապատվել են կերամիկական սալիկներով:

Ճակատների որմնախարսները վերանորոգվել են՝ անջատված բազալտե սալիկները քանդվել են և նրա տեղում իրականացվել է նոր երեսապատում: Պատերի որոշ հատվածներում քանդված սվաղը վերականգնվել է և ճակատները ներկվել են ճակատային ներկերով: Պատուհանագոգերը իրականացվել են բազալտե սալիկներով:

Տանիքում նախատեսված է մասնակի վերանորոգում՝ փայտե կոնստրուկցիաների վնասված հատվածների փոխարինում, նոր ծածկույթի իրականացում բիտումային կղմիկոդով:

Կոնստրուկտորական մաս

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի «Նարեկ» մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգը կարկասային է իրականացված ե/բետոնե տարրերով:

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» շինարարական նորմերի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ կառուցապատման տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, զրոնտների առավելագույն հորիզոնական արագացումը՝ $A_{max}=0.5g$:

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմերի, կազմում է 74սմ, ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգու/մ2:

Արտաքին նոր աստիճանները իրականացվել են երկաթբետոնից 16սմ հաստությամբ: Աստիճանները հենված են անկյունաձև երկաթբետոնե պատերի վրա: Աստիճանները ամրանավորված են 12մ տրամագծի A500C դասի ամրաններից իրականացված երկտակ ամրանային ցանցով: Աստիճանների բետոնե B20 դասի է: Անկյունաձև պատերը իրականացվել են B20 դասի բետոնով 200մմ հաստությամբ ամրանավորված 12մ տրամագծի A500C դասի ամրաններից իրականացված երկտակ ամրանային ցանցով:

Ջեռուցում և օդափոխություն

Ջերմության աղբյուր են հանդիսանում առանձին կանգնած կաթսայատուներ:

Որպես ջեռուցիչներ՝ նախատեսվել են $h=500$ մմ բարձրությամբ ալյումինե ջեռուցիչ սարքերը: Յուրաքանչյուր ջեռուցիչ սարքի համար նախատեսվել են վերնի ու ներքնի փականներ, օդահեռացման փական, խցաններով և կախիչներով համալրում: Նախատեսվել են պոլիպրոպիլենե խողովակներ: Համակարգն իրականացվել է երկխողովականի, հորիզոնական մատակարարումով, մայրուղային խողովակաշարերում ջերմատարի համընթաց շարժման սխեմայով: Մայրուղային խողովակաշարը, ջերմափոխանակչին սնուցող խողովակաշարը ջերմամեկուսացվել են մեկուսիչներով: Ծաղենահարկով անցնող ջերմամատակարարման ջերմամեկուսացված խողովակների համար նախատեսվել է լրացուցիչ ջերմամեկուսացում՝ ֆոլգայապատ հանքային բամբակով:

Շենքում իրականացվել է ներածող-արտածող, ընդհանուր փոխանակային օդափոխություն՝ ներածող օդի նախնական տաքացումով: Սանհանգույցներից օդի արտածումն իրականացվել է ԱՀ-1(ս/հ); 2(ս/հ); 3(ս/հ) համակարգերով: Ձեղնահարկում արտածման օդատարները ջերմամեկուսացվել են ֆոլգայապատ հանքային բամբակով, իսկ ներածման օդատարները ջերմամեկուսացվել են ինքնաստանձվող մեկուսիչով, որից հետո փաթաթվել են ֆոլգայապատ հանքային բամբակով:

Էլեկտրամատակարարում

Նախատեսվում է մասնաշենքի գործող մուտքային բաշխիչ վահանից հնգաջիղ մալուխով իրականացնել նոր տեղադրվող լուսավորության խմբային վահանների էլեկտրասնուցումը, որտեղ մալուխի հինգերորդ ջիղը ծառայում է որպես հողանցման ջիղ: Նախագծվող բոլոր մալուխագծերը պարտադիր անցնում են՝ գիպսոսովարաթողթե առաստաղի վրա պարտադիր ՊՎՔ խողովակներով, իսկ պատերով՝ փակ սվաղի տակ: Անբողջ բեռի ամփոփ հաշվարկը իրականացվել է ՀՀՇՆ 43-01-2025 §Բնակելի և հասարակական շենքերի էլեկտրասարքավորանք: Նախագծման նորմերի-ի համաձայն: Լուսավորության հաշվարկները կատարված են համաձայն ՀՀՇՆ 22-03-2017 §Արհեստական և բնական լուսավորում, ըստ սենյակների նշանակության: Լուսավորությունը իրականացվում է առաստաղին ներկառուցվող լուսատուների միջոցով: Նախատեսվում է նաև մասնաշենքին հարող տարածքի լուսավորության:

Լուսավորության հենասյուների ընդհանուր տեսքը համաձայնեցվել է պատվիրատուի ներկայացուցիչների հետ և ընտրված հենասյուների հիման վրա իրականացվել լուսատեխնիկական հաշվարկ:

Լուսատեխնիկական բոլոր հաշվարկները կատարվել են §DIALux՝ ծրագրով : Չեն բացառվում նախագծում շված տեղադիրքերում հենարանների տեղադրման խոչընդոտների առկայություն:

Նման դեպքերում, կախված իրագործելիությունից, հատակագծում նշված հենամիջյան հեռավորությունը կարող է փոխվել մինչև 1,0 մ:

Հողանցումն նախատեսվում է իրականացնել մուտքային բաշխիչ վահանի հողանցման հպակից, որը իր հերթին միացված է գործող հողանցման կոնտուրին: Ենթադրյալ է կոնտուրային սարքավորումների և էլեկտրասպառիչների լարման տակ չգտնվող, հպումներին հասանելի մետաղական իրանը, բաց հաղորդող մասերը ենթակա են հողանցման կամ գրոյակցման սարքավորման կամ սպառիչի հողանցման հպակի միջոցով:

Ջրամատակարարում, կոյուղի

Ջրամատակարարումը իրականացվել է Փ110մմ տրամագծի պոլիէթիլենային խողովակաշարով, որը միացված է մոտակա գոյություն ունեցող ջրագծին: Միացման կետում նախատեսվել է 1500մմ տրամագծի դիտահոր ջրաչափական հանգույցով: Ջրամատակարարման ներքին ցանցը իրականացվել է պոլիպրոպիլենային խողովակներից: Տաք ջրամատակարարումը իրականացվել է կաթսայատնից: Տաք ջրամատակարարման համար նախատեսվել է ջրամատակարարման շրջանառու ցանց:

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվեն են դեպի ներտարածքային արտաքին ցանց: Արտաքին ներտարածքային ցանցը անցկացվում է պոլիմերային ծալքավոր կոյուղու խողովակներից SN-8 Փ150մմ: Կոյուղու դիտահորերը նախատեսվել են երկաթբետոնե հավաքովի կյոր տարրերից 1000մմ տրամագծի: Կոյուղու ներքին ցանցը իրականացվել է պոլիմիդիլթրոֆիլային 50 և 110մմ տրամագծի խողովակներից:

«Նարեկ» Մասնաշենքում նախատեսվել է հյշեջ ծորակների և սպիլնկերային հրդեհաշիճման համակարգեր: Հրդեհաշիճման համակարգի համար կաթսայատանը նախատեսվել է 27լմ ծավալով ջրի պաշար և պոմպակայան երկու պոմպերով:

Կապի համակարգեր

Կառույցի բուժանձնակազմի կանչի ազդանշանային համակարգի նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները կատարվել են Պատվիրատուի կողմից ներկայացված ճարտարապետական հատակագծերի և նախագծային առաջադրանքի համաձայն: Նախագիծը կազմված է ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի դրույթների համաձայն: Համակարգի հսկումն ու ղեկավարումն իրականացվում է РИИГ-ПМ բուժքրոջ ղեկավարման վահանակի միջոցով: Դեկավարման վահանակը 1-ին հարկում տեղադրված է անձնակազմի սենյակում առաջին հարկի թ.58 սենյակում, հնարավոր է վահանակի տեղափոխումը այլ տարածք, նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ, 2-րդ հարկում տեղադրված է բուժանձնակազմի թ.14 և թ.37 սենյակներում, ղեկավարման վահանակը տեղադրված է բուժքրոջ սեղանի վրա կամ սեղանի մոտ՝ պատին: Բոլոր հիվանդասենյակների արտաքին կամ ներքին պատին տեղադրված են РИИГ-ПМ հիվանդասենյակի վերահսկիչներ (ամրացվում են DIN ձողով) որոնք հաջորդաբար միացված են բուժքրոջ վահանակին: Հիվանդասենյակի վերահսկիչներին միացված են ստանդարտ կանչի կոճակները, որոնք գտնվում են հիվանդի հասանելիության տարածքում, ներկայանալու/վերագործարկման կոճակը, և միջանցքի լույսը: Հիվանդը սեղմում է ստանդարտ կանչի կոճակը, որից ազդանշանը հաղորդվում է բուժքրոջ վահանին, ակտիվանում է նաև միջանցքի լույսը: Բուժքրոյրը ներկայանում է հիվանդասենյակ և սեղմում է ներկայանալու/վերագործարկման կոճակը 2 անգամ՝ 1-ը ներկայանալիս և 2-ը՝ հեռանալիս ապակտիվացնելով այն: Բոլոր հիվանդասենյակի վերահսկիչներ ունեն իրենց համապատասխան հասցեները, ազդանշանի դեպքում համակարգի գլխավոր վահանակի վրա պատկերվում է թե որ հսկվող սենյակից է կատարվել ազդանշանը:

Մալուխները տեղակայել առաստաղների վրա գտնվող լուսավորիչներից և բարձր լարման հոսանքագծերից նվազագույնը 0,5մ: Համակարգի մալուխները տեղակայել ՊՎՔ խողովակների մեջ: Համակարգերի սարքավորումների էլեկտրասնուցման համար օգտագործվել է անխափան սնուցման աղբյուր:

Կառույցի հրդեհի ազդանշանային համակարգերի նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքները կատարվել են Պատվիրատուի կողմից ներկայացված ճարտարապետական հատակագծերի և նախագծային առաջադրանքի համաձայն: Նախագծում օգտագործվող բոլոր

սարքավորումներն ու նյութերն անհրաժեշտ է ունենան համապատասխանության և հրդեհային անվտանգության սերտիֆիկատներ: Նախագիծը կազմված է ՀՀ գործող նորմատիվային փաստաթղթերի դրույթների համաձայն: Համակարգի հսկումն ու ղեկավարումն իրականացվում է C2000M ղեկավարման վահանակի միջոցով: Ղեկավարման վահանակը պայմանականորեն տեղադրված է անձնակազմի սենյակում առաջին հարկի թ.58 սենյակում, հնարավոր է վահանակի տեղափոխումը այլ տարածք, նախապես համաձայնեցնելով պատվիրատուի հետ: Տարածքները հսկվում են հասցեային ծխային և ջերմային ազդասարքերով: Բոլոր ազդասարքերը ունեն իրենց համապատասխան հասցեները, հրդեհի ազդանշանի դեպքում համակարգի գլխավոր վահանակի վրա պատկերվում է թե որ հսկվող սենյից է կատարվել ազդանշանը: Համակարգի կառավարման գլխավոր կայանը միացված է պահպանային ազդանշանման սարքին, որը հրդեհի ահազանգի դեպքում ունի հնարավորություն բջջային ցանցով ավտոմատ տեղեկացնի /ուղարկի հաղորդագրություն և զանգի/ իր մեջ գրանցված մինչև 8 համարներին՝ պահակային ծառայություն, 911, շենքի պատասխանատու և այլ: Սարքավորումների, ազդասարքերի, ազդարարների տեղակայումն իրականացնել ՀՀՇՆ 21.01.01-2014 նորմատիվային փաստաթղթի և տեխնիկական անձնագրերի պահանջների համաձայն: Ազդասարքերը, ազդարարները տեղակայել առաստաղների վրա գտնվող լուսավորիչներից և բարձր լարման հոսանքազներից նվազագույնը 0,5մ, օդավորակավորիչներից՝ նվազագույնը 1մ հեռավորության վրա: Հրդեհի ձեռքի ազդասարքերը տեղակայել հատակից 1,5մ բարձրության վրա, ելքերի և տարհանման ուղիներում: Հակահրդեհային համակարգի մալուխները տեղակայել ՊՎՔ խողովակների մեջ: Համակարգերի սարքավորումների էլեկտրասնուցման համար օգտագործվել է անխափան սնուցման աղբյուր, որի էլեկտրասնուցման և հողանցման հնարավորությունը 1-ին կարգ, ապահովվում է Պատվիրատուի կողմից: Ցանցային էլեկտրասնուցման բացակայության դեպքում, անխափան սնուցման աղբյուրներն ապահովում են համակարգերի երեք ժամյա անխափան աշխատանքը:

Նախահաշվային մաս

Աշխատանքների ներկայացված նախահաշվային արժեքը կազմել է 436.029,711 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է ՀՀ կառավարության 17.10.2024թ. №1656-Ն որոշմամբ հաստատված **«Շինարարական աշխատանքների գնագոյացման նախահաշվային նորմերի ու դրանց կիրառման կարգի»** համաձայն:

Աշխատավարձի անցումային ինդեքսն ընդունված է 2427,42, մեքենաների շահագուծման ինդեքսը՝ 2956,69 :

Նյութերի արժեքը հաշվարկված է ՀՀ ֆինանսների նախարարության 2026թ. N03 «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով:

Նախահաշվում հաշվի են առնված հետևյալ ծախսերը.

- վերադիր ծախսեր՝ 13.3%,
- շահույթ՝ 11%,
- ժամանակավոր շենքերի և շինությունների ծախսեր՝ 0,5%,
- կլիմայական պայմանների ազդեցության ծախսեր՝ 0,45%,
- տարածքի մաքրման և գոյացած շինադրի տեղափոխման ծախսեր՝ 0,15%,
- տեխնիկական հսկողության ծախսեր՝ 1,3%,
- հեղինակային հսկողության ծախսեր՝ 0,6%,
- չնախատեսված ծախսերը՝ 3%,
- ԱԱՀ՝ 20%:

Նախահաշվը կազմված է նախագծային փաստաթղթերի և շինարարական ծավալներ ամփոփաթեթերի հիման վրա:

Դիտարկելով ներկայացված նյութերը փորձաքննությունը նշում է՝

- Բացակայում է տարածքի ինժեներաերկրաբանական եզրակացությունը:

- Բացակայում է ՀՀ Քաղաքաշինության, տեխնիկական և հակահրդեհային տեսչական մարմնի եզրակացությունը
- Բացակայում է վերելակի որպես վտանգավոր օբյեկտ մասնագիտական կազմակերպության կողմից տրված փորձագիտական եզրակացությունը
- Տարածքը ըստ ՀՀՇՆ 20.04-2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն Նախագծման նորմերի գտնվում է 3-րդ գոտում նախագծում նշված 2-րդ գոտու փոխարեն:
- Ճարտարապետի արտոնագիրը չի համապատասխանում տվյալ դասի՝ 4-րդ (բարձր) ռիսկայնության աստիճանի օբյեկտի նախագծմանը: Այն համապատասխանում է 3-րդ (միջին) ռիսկայնության աստիճանի:
- Կոնստրուկտորի արտոնագիրը չի համապատասխանում տվյալ դասի՝ 4-րդ (բարձր) ռիսկայնության աստիճանի օբյեկտի նախագծմանը: Այն համապատասխանում է 2-րդ ռիսկայնության աստիճանի:
- Համաձայն ՀՀՇՆ 20-06-2014 նորմատիվային փաստաթղթի հավելված 1-ի հիմնանորոգման կամ վերակառուցման նվազագույն թույլատրելի մակարդակը սեյսմազինվածության բարձրացումն է, որը նախագծում բացակայում է:
- Աստիճանաքայլի և հարթակի միացման հանգույցը սխալ է կոնստրուկտավորված:
- Աստիճանների միացումը գոյություն ունեցող կառույցին բացակայում է:
- Անկյունաձև պատերի միացումը գոյություն ունեցող հիմքերին անհասկանալի է՝ պետք է ավելացնել մանրամասն հանգույցներ:
- Կոյուղու արտաքին ցանցը փակուղային է՝ բացակայում է ելք դեպի քաղաքային ցանց կամ մաքրման կայան:
- Բացակայում է քաղաքային ցանցին ջրագծի միացման կետը և դրա լուծումները:
- Բացակայում է հակահեղեհային ազդանշանային համակարգը, բժշկական կանչի համակարգը:

Փորձաքննության ընթացքում՝ համաձայն վերը նշված դիտողությունների և առաջարկությունների, քննարկումների արդյունքում նախագծանախահաշվային փաստաթղթերում աշխատանքային կարգով կատարվել են համապատասխան ուղղումներ, ճշգրտումներ և բացթողումների լրացումներ:

Եզրակացություն՝

Երաշխավորվում է ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձոր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գոյություն ունեցող «Նարեկ» մասնաշենքի ընթացիկ նորոգման աշխատանքային նախագծանախահաշվային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին:

Հ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի «Վանաձոր բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գոյություն ունեցող «Նարեկ» մասնաշենքի ընթացիկ նորոգման շինարարական աշխատանքների ամփոփ նախահաշիվը կազմում է 436.029,711 հազ. դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Փորձագիտական խմբի անդամներ՝ Մ.Մկրտչյան, Հ. Սողոմոնյան, Վ. Ղազարյան, Ա. Ասրիյան, Կ. Սահակյան, Հ. Գևորգյան:

Տնօրեն



Հ. Սողոմոնյան